ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

17 նոյեմբերի 2026թ. **N 673-Ն**

ՈՐՈՇՈՒՄ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ և 19-րդ կետերով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Սարալանջի փողոցի մի հատվածն (սկսվում է Վահրամ Փափազյան փողոցից և ձգվում մինչև Ազատության պողոտայի վերջնամաս, այնուհետև, շարունակվելով՝ հատում է Ալ.Մյասնիկյան պողոտան, Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների սահմանագծով կիսաշրջանաձև շարունակվում է և հասնում Ա. Արմենակյան փողոց) անվանափոխել Հայաստանի ազգային հերոս, «Իզմիրլյան» հիմնադրամի հիմնադիր Տիգրան Իզմիրլյանի անվամբ՝ «Տիգրան Իզմիրլյան փողոց»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

2026թ. նոյեմբերի 17
Երևան